ՆՈՐ-ԴԱՐ

№ 178 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Երեքշաբթի 22 Հոկտեմբերի 1885 Երեքշաբթի 22 Հոկտեմբերի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 178

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. եռամսեայ՝ 3 ր. 50 կ. Հասցով 5 կոպեկ։
Բաժանորդագրվում են Թիֆլիսում մխիթարեան հայրապետանոցում։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ՝ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի կոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գինն 2 կ., իսկ հրատարակութեան համար՝ կրկնապատիկ

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող. — Ընտրութիւնները Ֆրանսիայում։
Քրոնիկոն.—Լուրեր։ Վնասակար միջատներ։
Քաղաքական.—Աւստրօ-Հունգարիա։ Բիւրմանական հարցը։ Թիւրքիա։ Բալկանեան գործերը։ Լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագիրներ։
Յայտարարութիւններ։
Բանասիրական.—Ջոն Տեններ։

Թիֆլիս, 21 Հոկտեմբերի 1885 թ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ։

—

Որքան էլ որ այժմս քաղաքական աշխարհին զբաղեցնողը Բալկան թերակղզու վերայ տիրող շրփոթ դրութիւնն է և դրանից յառաջացող պատերազմի երկիւղը, այնուամենայնիւ պակաս հետաքրքրքրութեամբ չեն հետևւում արդէն կատարուած պարլամենտական ընտրութիւններին Ֆրանսիայում և կատարուելիք ընտրութեանը Անգլիայում։

Որովհետև այդ երկու առաջնակարգ, մեծ և հզօր կառավարութիւնների բռնելիք թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութիւնը, միով բանիւ երկրի ճակատագիրը կախուած է իրենց պարլամենտներից, այլապէս պարլամենտում նիստ և ձայն ունեցող պատգամաւորներից, հետևաբար ընտրութիւնները վճռական նշանակութիւն ունին, ինչու որ միմեանցից տարբեր հայեացքներով քաղաքական կուսակցութիւնները ընտրութեան պայքարի մէջ մտնելով՝ իւրաքանչիւրը աշխատում է իւր կուսակցութեան մարդիկների ընտրութիւնը յաջողեցնել։ Կատարուած ընտրութիւնից արդէն յայտնվում է թէ՝ որ կուսակցութեան ներկայացուցիչները աւելի բազմաթիւ են, որով և իմացվում է թէ պետական բոլոր գործերի վերաբերութեամբ որ քաղաքականութիւնը տիրապետող և գործերին ընթացք տուողն է լինելու։

Ֆրանսիան 1870-ի մեծ պատերազմից յետոյ, կայսերութիւնից հասարակապետութեան փոխուեցաւ։ Որքան էլ որ կայսերական և արքայական կուսակցութիւնները մեքենայութիւնները լարեցին հասարակապետութեան դէմ, այնուամենայնիւ Ֆրանսիայում հասարակապետութիւնը աւելի հաստատուեցաւ, որովհետև ազգը ընտրում էր պարլամենտի համար բաւական մեծամասնութեամբ հասարակապետական պատգամաւորներ, այնպէս որ կառավարութեան ղեկը միշտ հասարակապետականների ձեռքումը լինելով՝ միւս քաղաքական հակառակ կուսակցութիւնները փոքրամասնութիւն էին ներկայացնում և հետևաբար անզօր, կառավարութեան ղեկը ձեռքն առնելու և հասարակապետութիւնը խորտակելով թագաւորութիւնը վերականգնելու Ֆրանսիայում։

Այս անգամուայ ընտրութեան ժամանակ պահպանողականները (արքայական, կայսերական, կղերական կուսակցութիւնները) յոյս ունէին, որ իրենք շատ նիստ և ձայն ձեռք կը բերեն պարլամենտում, չը նայելով որ այս ընտրութեանը առաջին անգամ պիտի գործ դրնուէր հանգուցեալ Գամբետտայի առաջարկած և պաշտպանած ընտրութեան նոր եղանակը։ Եւ ճշմարիտ, որ Հոկտ. 4-ին կատարուած ընտրութիւններին յաջողուեցաւ պահպանողականներին մեծ մասամբ իրենց մարդիկներին ընտրել տալու, որով մեծ իրարանցումի մէջ ձգեցին հասարակապետականներին, ինչու որ հասարակապետականների այդ պարտութիւնը թագաւորութեան վերականգնումն էր նշանակում։ Բայց Հոկտ. 18-ին վերջնական ընտրութիւններին դարձեալ յաղթութիւնը տարան հասարակապետականները և այժմ գոնէ հասարակապետութեան անկման երկիւղը փարատեցաւ։

Նորընտիր պարլամենտը բաղկացած է 584 պատգամաւորներից, դրանցից 383-ը հասարակապետականներ են, իսկ 201-ը արքայականներ։

Մենք տեսնում ենք որ հասարակապետականները դարձեալ մեծամասնութիւն են ներկայացնում պարլամենտում, բայց պէտք է գիտենալ, որ այդ 383 հասարակապետականները իրենց մէջ զանազան կուսակցութիւնների բաժանուած՝ միմեանց դէմ կատաղի պատերազմ են մղում։ Այդ հասարակապետականների շարքը սկսվում է չափաւոր ազատամիտներից և հասնում է մինչև կարմիր արմատականներին։ Ինչ ասել կուզէ, որ իւրաքանչիւր նշանաւոր խնդրում երբ հասարակապետականները միմեանց դէմ բաժանուած կը լինեն, խնդիրը վճռող կը լինեն դրանցից նրանք, որոնց կողմը կանցնեն արքայականները։ Սա նշանակում է որ այս անգամ էլ թեպետև հասարակապետականները յաղթութիւնը տարան, բայց իրենց կացութիւնը շատ ծանր է և շատ բան էլ չեն կարող առաջ տանել։ Եթէ այս հանգամանքի վերայ աւելացնենք նախ այն՝ որ այս դրութեան մէջ առաջին անգամն էր հասարակապետութեան հաստատուելու օրից, որ արքայականները աւելի նիստ և ձայն են վաստակում պարլամենտում, երկրորդ, որ հասարակապետականները իրենց մէջ զանազան, միմեանց հակառակ, կուսակցութիւնների բաժանուած Գամբետտայից յետոյ այլևս նշանաւոր մեծութիւնները չեն առաջ բերում, երրորդ որ մեծ Յեղափոխութիւնից յետոյ Ֆրանսիայում ոչ մի պետութեան ձև երկարատև չէ եղել —կարելի է ասատել որ գոյէ մի օր Ֆրանսիայում թագաւորութիւնը վերականգնուի։ Ֆրանսիան արդէն անակնկալ փոփոխութիւնների երկիր է և կառավարութեան այժմեան ղեկավարները շատ են փորձում Ֆրանսիական ազգի համբերութիւնը։ Ֆրանսիայում այժմ իւրաքանչիւր Ֆրանսիացի պարտաւորուած լինելով զինուոր լինելու, բնականապէս տրտնջում են կօլօնեալ—քաղաքականութեան դէմ, որ իզուր տեղը Ֆրանսիացիների արիւնը հոսել է տալիս Տոնկինում և գրպանները էլ դարդակել տալիս։

Այժմս երջանիկ Ֆրանսիան էլ զգում է, որ ֆինանսները կարող են նրան ապագայում շատ նեղութիւններ պատճառել և պետական գանձարանը դարդակել և երկիրը պարտքի մէջ ձգել։ Ահա այս հանգամանքը կարող է Ֆրանսիային ցածրացնել արդի կառավարութեան ձեռից։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

Պետերբուրգի ռուսական աշխարհագրական ընկերութեան ժողովում, ընկերութեան պատուաւոր անդամ, ակադեմիկ Վ. Արիխը Ֆրանսիական լեզուով Կովկասի երկրաբանական կազմակերպութեան մասին մի նկարագրութիւն հաղորդեց։ Նկարագրութիւնը գլխաւորապէս մասնագիտական կէտից էր և նուիրած էր Կովկասի լեռնանց շղթաների կազմակերպութեանը։ Նկարագրութեան ժամանակ պ. Արիխը իւր տնած Կովկասի բէկերի քարտէզի վերայ բացատրութիւններ էր անում։

Վերջացնելով իւր դասախօսութիւնը գիտնականը, ինչպէս հաղորդում է „Нов. Вр.“ լրագիրը, յայտնեց, որ պատրաստվում է լոյս ընծայել իւր նկատողութիւնների 3-րդ հատորը։

—

Ֆրանսիական նաւթի ընկերութիւնը, որը այս տարում ձեռք է զարկել մշակելու Կուբանի նահանգի Կուտայսում գտնուած նաւթի աղբիւրները, ինչպէս հաղորդում է „Новости“ լրագիրը, վճռել է չնեղել 35 վերստ տարածութեան վերայ նաւթի անգքերը, Կուդաջոյից մինչև Նովօրօսսիյսկ։

—

Վէննայի „Presse“ լրագրին Գալացից հոկտեմբերի 8-ից (20-ից) հեռագրում են, որ բուսիլիական ուսումնական սպաների կոմմիսիան անցաւ այդ քաղաքի վերայով դէպի Թիֆլիս, այն նպատակով, որ գնէ Անդրկովկասում բուսիլիական լեռնային ենդանիների համար 1,000 հաս ջորի։

—

„Kacnій“ լրագրի աւելթամբ, մօտ օրերումս Եամախի ժամա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՋՈՆ—ՏԵՆՆԵՐԸ

—

Մեր ընտանեքը ենթարկուելով այլ և այլ դժբաղտութիւնների, ցանկացանք մեր բնակութեան տեղը փոխել։ Այդ առիթով հայրս, որը քահանայ էր, հարիւր ընտանեքի հետ Ճանապարհուելով՝ հասաւ Բիկ-Միամ գետի բերանը, որտեղ մենք պէտք նոր բնակութիւն հաստատէինք։ Բիկ-Միամի մօտ կային մի քանի աղքատ խրճիթներ, որոնց բնակիչները Թողած իրենց հայրենական հողն ու անդաստանը՝ վայրենի աւազակներից ապահովուելու համար եկած էին այդ տեղը։ Այդ նորեկ բնակիչները, ինչպէս տեղեկացանք, ենթարկուելով զանազան վայրենի աւազակ մարդկանց ասպատակութիւններին և այլ ևս միջոց չունենալով ընդդիմադրելու՝ գաղթել էին, ինչպէս մենք, ուրիշ հող, գուցէ այդ տեղում նրանք գտնէին հանգիստ ու անվրդով կեանք։ Սակայն դրանք այդտեղ էլ անհանգիստ էին սովալլուկ վայրենիների յարձակմունքներից։

Հայրս ամեն բան կարգի դնելուց յետոյ, բոլոր խրճիթների շուրջը ցանկով պատեց. այդ ժամանակ գարուն էր։ Իւրաքանչիւր մարդ իւր բնտանեկան հոգսերի վերայ էր մտածում, գարնանային վարուցանք էր անում։ Մեր վերաբնակութիւնից տասն օր անցնելուց յետոյ, մենք նկատեցինք վայրենիների հետքերը, որոնք մօտենալով մեզ՝ ցանկանում էին յարձակումն գործել։ Մի օր, երբ հայրս պատրաստվում էր դաշտը գնալու, ասաց ինձ.

„Ջոն, այսօր տանից ամենևին հեռու տեղեր չը գնաս, կարող է քեզ վտանգ պատահել“։ Ցետոյ ինքը մեծ եղբօրս և մշակների հետ գնաց դաշտը վարելու։ Տանը մնացինք չորս երեխաներս և խորթ մայրս, որը ինձ տանից դուրս գալը արգելելու նպատակով փոքրիկ երեխայի խնամատարութիւնը յանձնեց ինձ. այդ ինձ համար շատ անտանելի էր, այդ պատճառով էլ տխրեցայ։ Երեխան չուռով սկսեց լալ և ազազակ բարձրացնել, այդ հչնոց իմ ցանկութիւնն էր, որ մայրս գրանով կը զբաղուէր և ես կարող էի իմ կազմած ծրագիրները իրագործել։ Խորթ մայրս երեխան վերցրեց և սկսեց կերակրել. այդ յարմար միջոցին ես արագ դուրս եկայ բակը, անցայ ղջլապատից և դուրս եկայ դաշտը։ Մեր տանից մի փոքր հեռաւորութեան վրայ կար մի ընկուզենի, ես վազեցի նրա տակը՝ անցած տարուց մնացած ընկոյզներն հաւաքելու։ Շատ զբաղուածութեամբ հասայ այնտեղ վաթենալով, որ հայրս կամ նրա ծառայողները չը նկատէին ինձ։ Ես այդտեղից տեսնում էի հօրս՝ հրացանը ձեռքին գաշտի մէջ պահապան կանգնած։ Այդ դրութեան մէջ տեսնելով հօրս՝ ես չը զարմացայ, որովհետև հայրս շատ էր պատմել ինձ վայրենիների յանկարծակի յարձակումները. նա զգուշութիւն էր պահպանում։ Այն օրից, երբ լսեցի „հնդկացի“ բառը, հետաքրքրութիւնս լարուել էր՝ հնդկացի տեսնելու։ Ես արդէն ծառի տակից ընկոյզները էի հաւաքել և գլխարկս լցրել. այդ միջոցին մի սօսափիւն լսեցի և յետ նայելով տեսայ մի քանի հնդկացիների, որոնք անելիքից մօտեցան ինձ և բռնեցին։ Նրանցից երկուսը ծերեր էին, մնացածները երիտասարդներ։ Նրանք բռնելով վեղերքս սկսեցին քարշ տալ։ Դրութիւնս վատթար էր, ձայն չէի կարող հանել, որովհետև նրանք գիտենալով որ մօտակայ դաշտում մարդիկները կան բերանս փակել էին։ Հընդկացիներից մէկը գլխարկս ձեռքիցս առաւ, բոլոր ընկոյզները թափեց ու այնպէս յետ տուեց։ Ես երկիւղից ամբողջ մարմնով դողում էի, ամբագայ վտանգները գուշակելով, ես ուշքիս եկայ։ Ուշքի գալուց յետոյ տեսայ որ հնդկացիներից մէկը չը կար։ Ես գտնվում էի երկու հնդկացիների մէջ. դրանցից մէկը, երևաց որ ինձ վերայ շատ բարկացել էր։ Նա նշաններով հասկացրեց ինձ, որ գլուխս դէպի վեր բարձրացնեմ, այդպիսով նա պատրաստվում էր հասս մահակի զարկով ինձ կեանքից պրկել։ Ես հնազանդելով գլուխս բարձրացրի և նա պատրաստուեց ինձ զարկելու, բայց միւս ընկերը շուտ ինձ խրեց նրա մահակի զարկից և ես ազատուեցայ։ Նրանք սկսեցին կռուել, որի ժամանակ մի քանի հնդկացիները վախան։ Մնացած երկուսը բռնելով ինձ, ձերքերիցս քարշեցին դէպի առաջ։ Ես հեռանում էի հայրենական խրճիթից, և սաստիկ ցաւում էի դրա համար։ Մենք առաջ անցանք մի մշտն տարածութիւն։ այդտեղ գետի ափին՝ Թվերի տակ Թագցրած ունէին ծառի կեղևից շինուած մի մակոյկ։ Այդտեղ վախած հնդկացիները եկան միացան մեզ հետ և մենք բոլորը հօդը հոգի, նաւելով նաւակը անցանք գետի միւս ափը։ Անտառում նրանք Թագցրել էին կաշուէ հագուստ և պարագ. առաջարկեցին ինձ որպէս միս և արջի ճարպ, բայց ես չկարողացայ ուտել։ Մեր փոքրիկ և սակաւաթիւ խրճիթների գիւղը հեռուից պեռերում էր. նրանք նայեցին դէպի այնտեղ և ծիծաղելով դարձան դէպի ինձ մի քանի խօսքեր արտասանելով, սակայն ես ոչինչ չը հասկացայ։

Ձաշելուց յետոյ մենք Ճանապարհ ընկանք գետի ուղղութիւնով. Ճանապարհին կոշիկներս հանեցին կարճելով, որ գրանք խանգարում էին ինձ Ճանապարհորդել։ Ես գեռ չէի կորցրել նրանց ձեռքից փախչելու յոյսը և անցած Ճանապարհս բոլորովին նշանաց՝ պահում էի մտքումս, որ յետ փախչելու ժամանակ Ճանապարհից չը շեղուիմ։

Գիշերը վրայ հասաւ. ես էլ յոգնածութիւնից շուտով քնեցի։ Միւս օրը առաւօտեան արևը ծագելուն պէս, պարձեցայ. հնդկիները արդէն պատրաստած էին Ճանապարհը շարունակելու։ Ես սաստիկ Թուլացած էի. ոտքերս ուռել էին փշերի ծակոցներից. միւս կողմից սնունդն պակասութիւնը շատ էր մաշում ինձ, ինձ շատ քիչ կերակուր էին տալիս։ Այդ անտանելի վիճակից ազատուելու համար, ես միշտ մտածում էի գիշերները փախչել, երբ հնդկիները քնած կը լինէին, բայց ե-

Նիկոլայ Վասիլևիչ Գոգոլ-Յանովսկի (ծնվ. 1809 թ. մարտի 20 (ապրիլի 1), մահ. 1852 թ. մարտի 4) — ռուս հանրահռչակ գրող, ծնվել է Պոլտավայի նահանգի Սորոչինցի գյուղում։ Հայրը՝ Վասիլի Գոգոլ-Յանովսկին, ազգությամբ ուկրաինացի, մայրը՝ Մարիա Կոսյարովսկայան, ազգությամբ ռուսուհի։ Գոգոլը սկզբնական կրթությունը ստացել է Նեժինի գիմնազիայում։ Ավարտելով գիմնազիան՝ 1828 թ. նա մեկնել է Պետերբուրգ, որտեղ մի քանի տարի անհաջող փորձեր է արել ծառայության մտնելու։ Գոգոլի առաջին գրական փորձերը՝ «Ганц Кюхельгартен» պոեմը և «Вечера на хуторе близ Диканьки» պատմվածքների առաջին մասը, լույս են տեսել 1829 թ. Գոգոլի հետագա գրական գործունեությունը կապված է Պետերբուրգի, Ռոմի, Նեժինի, Մոսկվայի և Ֆրանկֆուրտի հետ։ Գոգոլի ստեղծագործությունները հրատարակվել են «Հանրային գրադարան» (Библиотека для чтения), «Ժամանակակից» (Современник), «Հայրենական նոթեր» (Отечественные записки) և այլ պարբերականներում։ Գոգոլի ստեղծագործությունների առանձին հրատարակությունները լույս են տեսել Պետերբուրգում, Մոսկվայում և Ֆրանկֆուրտում։ Գոգոլի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն, լեհերեն, չեխերեն, հունգարերեն, իտալերեն, սերբերեն, հայերեն և այլ լեզուներով։

Գոգոլի ստեղծագործությունների առաջին հրատարակությունը՝ «Вечера на хуторе близ Диканьки» պատմվածքների առաջին մասը, լույս է տեսել 1829 թ. Պետերբուրգում, 235 էջ, 10 կ., տպաքանակը՝ 1000 օրինակ, տպագրվել է «Հայրենական նոթեր» (Отечественные записки) ամսագրի տպարանում։ Գրքի կազմի վրա տպագրված է հետևյալ տեքստը՝ «Вечера на хуторе близ Диканьки, повесть пасичника Рудого Панька, издание второе, исправленное и умноженное». Գրքի առաջին հրատարակության մասին տեղեկություններ կան «Հայրենական նոթեր» ամսագրի 1829 թ. հունվարի 85 էջ։ Գրքի հրատարակության մասին հաղորդագրություն է տպագրվել նաև «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի 1829 թ. հունվարի 100 և 270 համարներում։ Գրքի առաջին հրատարակության մասին տեղեկություններ կան նաև Ա. Ս. Պուշկինի նամակներում։ Գրքի առաջին հրատարակության մասին տեղեկություններ կան նաև Ա. Ս. Պուշկինի նամակներում։

ԻՆՉՊԵՍ ԶՍՊՑԻ ԱՄԵՐԻԿԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

—

Ամերիկացի հայտնի լրագրող Ջորջ Քենանը, որ մի քանի տարի առաջ ուղևորվել էր Ռուսաստան՝ ճանապարհորդելու համար Սիբիրի միջով, հրատարակել է իր ճանապարհորդության նկարագրությունը երկու հատորով։ Ինչպես հայտնի է, Քենանը ուղևորվել էր Ռուսաստան՝ ուսումնասիրելու համար Սիբիրում աքսորյալների դրությունը։ Նրա գրքերը մեծ հետաքրքրություն են առաջացրել ամերիկացիների մեջ, որոնք ամենայն ուշադրությամբ հետևում են ռուսական կառավարության քաղաքականությանը։ Ամերիկացի հանրությունը, որ ինքն ազատության երկիր է, ամենայն համակրանքով է վերաբերվում ռուս ազատասերների ձգտումներին

ճակի հետ։ Ցետ այնուհետև սկսեց Ֆաֆուկ ուսումնասիրել ռուս և Ֆրանսիական յեղուները, որից յետոյ նրա ընթերցանութեան ասպարէզը ընդարձակուեցաւ։ Ընթերցարանի անդամներից մի քանիսը, նկատելով նրա մէջ ընդունակութիւնները, ուղարկեցին նրան Բուխարեստ և ծանօթացրին բոլղարական գործողների հետ, որոնք պատրաստուում էին փրկելու իրենց հայրենիքը Թրքական լծի տակից։ Այս անձնքները շատ անգամ ուղարկուում էին Ստեֆանովիչի աղբատի չորերով ժողովրդի մէջ։ Գիւղացիները, ճանաչելով նրան Դրանգու անունով, մեծ համակրութեամբ ընդունում էին նրա հետ։ Երբ Սերբիայի և Թիւրքիայի մէջ պատերազմ բացուեցաւ, նա մասնակից էր այդ պատերազմին, բայց գերի ընկաւ և սկսեց իրեն ցմահ և խեղդ ձևացնել, որպէսզի հետ Թիւրքերը քաղցրութեամբ են վարուում։ Այսպիսով պաշտպանելով իւր կեանքը, ընկաւ մի քանի անգամ զանազան բանտերի մէջ, ուր աւելի ուսումնասիրեց իւր ազգի դառն վիճակը։ Շնորհիւ Սան-Ստեֆանօյի խաղաղութեան, նա ազատութիւն ստացաւ։ Վերադառնալով Բոլղարիա, նա գրագրի պաշտօնով մասնաւոր դաստարան։ Երբ իշխան Ալէքսանդրը խնդրեց Տիւնովի սահմանագրութիւնը, Ստեֆանովը իշխանի վերայ ,,Խոկինդէր—բէյ'' վերնագրով մի երգիծաբանական վէպ գրեց, որի համար ստիպուեցաւ փախչիլ Բուխարէիս։ Այստեղ նա երեք գրքոյկներ հրատարակեց, վերաբերեալ բոլղարական ազատամարտութեանը, նրա առաջնորդների և Լիւբէն Կարավելովի կենագրութեանը, որոնք կարճ ժամանակում այնպիսի հեղինակութիւն ստացան, որ նրանց կարելի էր գտնել ամեն մի բոլղարական տան մէջ։ Վերջին ժամանակներում նա Պլովտիվում հրատարակից ,,Борьба'' վերնագրով մի լրագիր և պատրաստից տպագրութեան համար ,,Պատմութիւն բոլղարական ըկեղեցւայ 1881—1883 թ.'', Նա այժմը էլ անցնելով բուսիլիական չարժողութեան գլուխը, մնաց մեհնդին Զախարը. վատ հագնուած, լուռ և մտածող, բայց ոգևորուած ժամանակ հարտարաբան և համակրելի։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

17 Հոկտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ֆինանսական մինիստրը հաստատեց պետական բանկի կօնտօրներից հացահատիկով փոխատուութիւն տալու կանոնները։ 130—190 յօդուածների հիման վերայ, պետական բանկը վճռեց Օդեսայի և Րօստովի կօնտօրներին, երկարաւոր կարգադրութիւններից յետոյ, յիշեալ կանոնների հիման վերայ, հացահատիկների փոխատուութիւն անել, պահանջելով տարեկան 6%։

ԱԹԷՆՔ. Կարգադրուեցաւ նաւաստորմիղի համար զօրքերի գումարտակ կանչելու։

ՓԱՐԻԶ. Ֆրէսինէ մինիստրի վերայ ատրճանակ արձակեցին։ Մինիստրը անվնաս մնաց։ Յանցաւորը կալանաւորուած է։

ԱԹԷՆՔ. Առաջնորդ Տրիկուպիսը յայտնեց, որ կը պաշտպանէ կառավարութիւնը և խորհուրդ տուեց եռանդով պաշտպանել հելլէնականութիւնը։

ՓԱՐԻԶ. Ֆրէսինէյ մինիստրի վերայ ատրճանակ արձակող անձը ցոյց տուեց որ սպանութեան փորձը նա արեց անձնական վրէժխնդրութեան նպատակով, որովհետև Ֆրէսինէյի պատճառով ոտնակոխ եղան նրա պատիւը և կարողութիւնը։ Յանցաւորը իւր անունը և ազգանունը չէ յայտնում, բայց ինչպէս երևում է կորսիկայի է։

ԲՈՒԽԱՐԵՍՏ. Աքսորուեցան 12 Հոգի հրէաները, գլխաւորապէս խմբագիրները, որոնք հրէական և հրէական ու գերմանական լեզուներով պարբերական թերթեր ու ամսագիրներ էին հրատարակում։ Աքսորման պատճառները։—Րումինիայի վերայ յարձակմունքներն էին։

18 Հոկտեմբերի.

ՆԻՇ. Պաշտօնական հեռագիրները հաղորդում են, որ բոլղարները սահմանագլխի ճանապարհները փակել են և կարգադրութիւն են արել, որ սահմանագլխի վերայով Սերբիայից եկող ամեն մի անցանողին սպանեն։ Ի նկատի ունենալով այս հանգամանքը, սերբիական զօրքին վճռական իրաւունք է տուած այսպիսի հանգամանքներում զէնքով պատասխանել։ Բոլղարական կամաւոր գինուորների հրոսակները սկսել են վրդովել իրենց արշաւանքներով Սերբիայի սահմանագլխի կենդրոնատեղերը։

ՍՕՖԻԱ. Պաշտօնական հեռագիրը յայտնում է, որ երեկ Բոլղարական կառավարութեան կողմից ուղարկած հեռագիրների հաղորդած լուրերը անհիմն են, սուտ են մանաւանդ այն լուրերը, որ իբր թէ զատական գինուորների հրոսակները և արշաւանքներ են անում։ Վերջինս սուտ է այն պատճառով, որ սահմանագլուխը պաշտպանում է կանոնաւոր զօրքը և ոչ թէ ինքնակամ գինուորները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Կրօնշտատի նախկին քաղաքագլուխ կապիտան Գօլօվաչեվի և նախկին թաղագլուխ Տիմօֆիեևի գործի մասին, որոնք մեղադրվում էին կաշառառութեան մէջ, Պետերբուրգի դատաստանական պալատը վճռեց զրկել Գօլօվաչեվին ամեն իրաւունքներից և ուղարկել բնակութեան համար Իրկուտի նահանգը, արգելելով չորս տարի չը բացակայել այնտեղից և իրաւունք չունենալ դուրս գնալ եւրոպական Ռուսիայի զանազան նահանգները ընթացս 12 տարուայ։ Վճիռը յանձնել կայսեր տեսութեան։ Յանցաւոր Տիմօֆիեևին զրկել ամեն իրաւունքներից ու կալքից և ուղարկել բնակելու Տօբոլի նահանգը. իսկ յանցանքը թեթևացնելու համար ներկայացնել վճիռը կայսեր, միջնորդելով արտաքսել նրան միայն պաշտօնից։ Գօլօվաչեվին անշուշտ ենթարկել ոստիկանութեան հսկողութեանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

18 Հոկտեմբերի

Երէկ տնօրէնն գրամաբծէրը։

Լօնդօն $22^{23}/_{32}$, $23^{7}/_{8}$ և $23^{23}/_{32}$
Համբուրգ $201^{7}/_{8}$ և $202^{3}/_{4}$ 202
Պարիզ $250^{3}/_{4}$, և 251 $250^{1}/_{2}$
Պօլուիմպերիալ 8 ր. 32 կ. սակ.
Մ'աքս. կուպոն. 8 ր. 24 կ. սակ.
Լրծաթ . . . 1 ր. 33 կ. սակ.
Բօրսային դիս. 5 և $6^{1}/_{4}$ %
Պետակ. բանկի 5% տոմսեր.
1-ին շրջանի 100 ր. — կ. սակ.
2-րդ » . $98^{3}/_{4}$ ր. — կ. գն.
3-րդ » . $98^{3}/_{4}$ ր. — կ. գն.
4-րդ » . 98 ր. 62 կ. սակ.
5-րդ » . 98 ր. 62 կ. սակ.
100 և 1000 արևելեան փոխառութեան 5% տոմսեր.
1-ին շրջանի $97^{1}/_{2}$ ր. — » սակ.
2-րդ » . $97^{1}/_{2}$ ր. — կ. սակ.
3-րդ » . $97^{1}/_{2}$ ր. 12 կ. սակ.
Առաջին ներքին փոխառութեան 5% տանող գումարի տոմսեր . . . $224^{1}/_{2}$ ր. » գն.
» » 2-րդ $209^{3}/_{4}$ ր. » սակ.
$5^{1}/_{2}$% բենտեր $102^{1}/_{2}$ ր. » սակ.
Ոսկէ բենտը . 176 ր. » սակ.

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՊՈՆԵԱՆ ՍՆՆԴԱՐԱՐ ՇՈԿՈԼԱԴ
Ֆարմացիայի մագիստրոս
Ա. Լ Է Ֆ Ա Ն Թ
Բժշկական դեպարտամենտի Թոյլտուութեամբ
Օգտաբեր գործող միևնարուեանն Գրքերս պահեստը ՇՏԻԿՄԱՆ և ԼԵՄԱՆ գերազանաեոցում. Մանկավարժ իլենիան Գործ է ածվում առանքի կատարքի գէմ



Пріятнаго вкуса, полезенъ дѣтямъ и взрослымъ, ОСОБЕННО МАЛОКРОВНЫМЪ, какъ увеличивающій питаніе.
Продается во всѣхъ кондитерскихъ, гастрономическихъ, аптекарскихъ магаз. и аптекахъ.
Цѣна коп. въ 20 плит. 1 р. 20 к. $^{1}/_{2}$ коп. 70 к.
Перес. коп. 40 к., 2 коп. 60 к. и т. д.

Անհրաժեշտ է, օգտակար է երեխայից և հասակաւորների համար, մանաւանդ ուժասպառականներին, երբև տնուղը ամէնքից նեղ ենթի ծննդականների համար և մանրուղ հիւանդութիւնների դէմ։
Վաճառվում է բոլոր քաղցրավաճառանոցներում, դասարանական, դեղավաճառական խանութներում։
Սրկղնկի գինն է (20 կոպ.) 1 ր. 20 կ., $^{1}/_{2}$ արկղիկը 70 կ. Առաքման գինը մի արկղի 40 կոպ., երեք արկղի 60 կոպ. և այլն։
(Ц.) 50—41

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Պատիւ ունիմ յայտնելու, որ Թիֆլիսի նորակազմ հայ դերասանական խումբը, իւր երկրորդ ներկայացում կը տայ հինգշաբթի երեկոյ, հոկտեմբերի 31-ին, նախկին Արծրունու թատրոնում կը խաղացուի

I

«ՄԱՆԿԱՆ ԲԱԽՇԿ»

կամ

«ԹՈՒՆԱՒՈՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ»

Դրամայ 5 գործողութեամբ. Թարգ. Ֆրանսերէնից

II

ԿԸՌԹ ԿԸՌԹ

Վօդ. 1 գործողութեամբ հեղ. Վ. Մադաթեանի. Հայերէն, ռուսերէն լեզուներով

Տեղերի գինը պահպանուած է

Սկիսքն է $7^{1}/_{2}$ ժամին

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ միայն կասսայում և արդէն ծախվում է։

Մանրամասնութիւնը ապիշայում։

Այս անգամ կը մասնակցէ խմբին պ. Յ. Քալանթարեանը։

Սակրտչեան

5—5

Վլադիկաւկազեան պօստային

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք Ճանապարհին դեչերելու կայարանները չունեն։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոեան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. մէջ
Վլադիկաւկասից դուրս են գնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյեան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ

Անդրկովկասեան երկաթուղին։

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍԻ" ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաքուից գնում է ժ. 8—35 րոպ. առ
Բաքուից „ գալիս է „ 10—25 „ գիշ
Բաքու . . . գնում է „ 10—55 „ գիշ
Բաքուից „ „ . . . գալիս է „ 8—„ „ ցեր

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ.

Թիֆլիսից ապր.—Հանապ. գնաց. գնում է . . . . . ժ. 3—15 „
Ասպարից գալիս է . „ 8—4 „ առ

Լոյս տեսան Ֆ. Շմիդթի
ԲԻՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ
Երկրորդ տիպ.։
(Գինն է 40 կոպ.)

ԳԷՈՐԳ ՎԱՇԻՆԳՏՕՆ
Երկրորդ տիպ.
(Գինն է 60 կոպ.)

Թարգ. գիրմ. Փ. Վարդանեան.

Վաճառվում են կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ
Ս. ՍԻՈՒ և Ը. ՐՆԿ.
(Ц. 2392.) 48—38

ՍԱՆԻՏԱՍ
ՊՈՊՈՎԱՅԱ ՔԷՇ
Լ. Է. ԱԴԵԼՃԷՅՄԻ
Կարելի է ստանալ բարձրագոյն Կովկասեան գաւառաւոտեան կեդրոնական գրավաճառանոցներում։

ПРОТИВЪ ГОЛОВНОЙ и ЗУБНОЙ БОЛИ:
МИГРЕНЕВЫЙ КРИСТАЛЛЪ
„САНИТАСЪ"
(также отъ кокаровъ).
ДЕПО ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ И АПТЕКАРСКИХЪ МАГАЗИНАХЪ.
Главный складъ: Москва. Кузнецк. мостъ, д. Соколова „САНИТАСЪ".
!!Перепродавцамъ скидка!!
!!Требуйте только „САНИТАСЪ"!!

ЗУБНЫЯ СРЕДСТВА
Л. Э. АДЕЛЬГЕЙМЪ.
Лучшія гигіеническія средства для укрѣпленія и сохраненія зубовъ и уничтоженія дурнаго запаха во рту.
Депо во всѣхъ городахъ Россіи.
Главный складъ: Москва, Кузнецк. мостъ, д. Соколова.
!!Перепродавцамъ скидка!!
(Ц. 18574) 50—13



ՊԱՀԵՍՏ
ԿԱՐԵՄԵ ՔԵՆԱՆԵՐԻ
ԳՈՐԾԱՏՈՒՆ
ՓՐԻՍՏԻԼԻ և ՐՕՄՄԱՆ
Նոր պատենտի տիպ
կատարելագործուած
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾ
ԿԱՏԱՐԵԼ ԱՊԱՀՈՎԱՅՈՒՄՆ
Ծախվում է ՓԱՄԱՆԱԿ ՏԱԼՈՎ
Մեկակ գործակալ՝ Է. Ֆ. Աուֆէլման. Թիֆլիս, Երևանեան Հրապարակ. տ. Տէր-Աստուածատրեանի։
100—17

ԴԱՍՏՐՈՆՈՄԻԿԱԿԱՆ ՐԵՍՏՕՐԱՆ

Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ Մուխրանսկիի տանը քաղաքային կլուբի տակ բացուած է բէսթորան-ճաշարան։ Կերակուրները միշտ ԹԱՐՄ և ԽՆԱՄՔՈՎ պատրաստուած և շատ ԶԵՒՆՈՒՏ ԳՆԵՐՈՎ, նոյնպէս ԸՆՏԻՐ ԻՆԻՆԵՐ տեղական, Կախէթի և եւրոպական։ Բիլիարդ, պօա, նարդէ, գամմոն հիւրերի համար։ Կէօօրաան ժամը 1-ից մինչև 5-ը ճաշ երեք կարգի. ա) երկու տեսակ կերակուր, մի փոքրիկ բաժակ օղի, կէս շիշ գինի և մէկ թաս կօֆէ. գինն է՝ 55 կ.։ բ) Եւթը տեսակ կերակուր, կէս շիշ գինի և մէկ թաս կօֆէ. գինն է 75 կ.։ գ) Չորս տեսակ կերակուրով, օղի, գինի գինն է՝ 85 կ.։

Կերակուրները կարելի է ստանալ և ՊՕՐՏԻՕՆՆԵՐՈՎ։

Յարգելի հիւրերի պատուէրներին միշտ պատրաստ է գոհացումն տալու։

15—14 ՊԻՊ-ՋՕՐԱԲ

„ԲՕՐՄԱՆԻ" ԲԱԼԶԱՄ

Թոյլ է տրուած բժշկական խորհրդից, և գործ է դրվում դերսից ոսկրային (բեվմատիզմի) ցաւերի դէմ։ Գլխաւոր պահեստը Պետերբուրգում. Բայշտայա-Կանիւշկինայա № 14—22, Թիֆլիս և Բագու. պետգործակատ առաջարկ Կովկասեան. ընկերութեան մէջ։ 32—11

Дозволено цензурою. Тифлисъ, 21-го Октября 1885 г.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр. д. № 12.